



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննաթերթ-Պատասխաններ

Հարցեր 1-25	50 միավոր
Խնդիր 1 Բաժին Ա. Բաժին Բ.	16 միավոր 5 միավոր
Խնդիր 2	9 միավոր
Խնդիր 3	9 միավոր
Խնդիր 4	6 միավոր
Խնդիր 5	5 միավոր
Ընդամենը	100 միավոր

Հունվար 2026թ.

Հարցեր 1-25

Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

Ընդամենը 50 միավոր:

1	Դ	
2	Ա	
3	Դ	
4	Ա	
5	Գ	
6	Գ	Փոխառության գծով՝ $1000000 - (200000 * 3) = 400000$, տոկոսների գծ.՝ $100000 + 80000 + 60000 + (40000 * 3) = 360000$
7	Բ	Ինքնարժեքի և վաճառքի զուտ արժեքից նվազագույնով, այն է 2000–ի և $(3000 - ԱԱՀ 20\% - (650000 / 1250)) = 1980$ –ի , կստացվի՝ 1980
8	Դ	
9	Դ	$-130000 + 450000 - 2500000 - 1300000 + 1200000 = -2280000$
10	Գ	$(1905000 + 208000) * 0.02 / 12 * 9 + 2512500 * 0.02 / 12 * 3 = 44257,5$
11	Դ	
12	Գ	
13	Բ	Առաջինը ստացվածը ավելի բարձր ինքնարժեք արժեք կունենա, շահույթը ցածր կստացվի, իսկ մնացորդը նույնպես կնվազի համեմատության մեջ նախորդ մոդելի
14	Ա	
15	Գ	
16	Գ	
17	Ա	
18	Դ	Տարեվերջին դեբ. պարտքերը կլինեն՝ $555000 / 0.03 + 45200000 - 47500000 = 16200000$, Կասկածելի դեբ. պահուստաֆոնը՝ $16200000 * 3\% = 486000$
19	Գ	
20	Գ	
21	Գ	
22	Դ	
23	Դ	
24	Ա	Եկամուտ– ծախս = $(1440000 / 1.2 / 12 * 11) - (60000 * 12) - (5500 * 12) = 314000$
25	Գ	

**Խնդիր 1 /Քաշվապահական ձևակերպումներ, ֆինանսական հաշվետվություններ/
Բաժին Ա)**

Պարտադիր չէ, որ հաշիվների համարները և անունները համապատասխանեն օրինակելի հաշվային պլանին: Կարևորը՝ հաշվի անվանման բովանդակությունը ճիշտ լինի, և հաշվային պլանի ընդհանուր կառուցվածքին համապատասխան լինի:

Կարող են օգտագործվել երկրորդ կարգի հաշիվները (ենթահաշիվները):

1. Արտադրամասի շինության սկզբնական արժեքով ճանաչում և հաշվառում:

Ա) Շինարարությանը մասնակցած աշխատողների աշխատավարձ՝ 12550000

Բ) Տեղանքի նախապատրաստման ծախսեր՝ 4500000

Գ) Նյութեր՝ 8502000

Դ) Վարկի գծով տոկոսներ՝ 2880000 (տոկոսները կապիտալացվում են մինչև որակավորվող ակտիվի կառուցման ավարտը ընդգրկող ժամանակահատվածի համար, փետրվար–հոկտեմբեր)

Ընդամենը՝ 28432000 դրամ

Դտ 1111	«Շենք ,շինություն»	28432000 դրամ
Կտ 118	«Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»	

(1 միավոր)

Գերնորմատիվային նյութական ծախսումների գծով՝

Դտ 714	«Գործառնական այլ ծախսեր»	450000 դրամ
Կտ 118	«Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»	

(0,5 միավոր)

Նոր արտադրամասում արտադրվող ապրանքի գովազդի ծախսերի գծով՝

Դտ 712	«Իրացման ծախսեր»	105000 դրամ
Կտ 118	«Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»	

(0,5 միավոր)

Վարկի տոկոսներ`

Դտ 727	«Ֆինանսական ծախսեր»	640000 դրամ
Կտ 118	«Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»	
		(0,5 միավոր)

Ամորտիզացիայի հաշվարկ և ձևակերպում:

$$28432000 * 4\% / 12 * 2 = 189547$$

Դտ 811	« Հիմնական արտադրություն»	
կամ 812		189547 դրամ
Կտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	
		(0,5 միավոր)

2. Ներկայացվածը չի բավարարում ՀՀՄՍ 16 –ով սահմանված հիմնական միջոցի ճանաչման պահանջներին:

Ճշգրտող ձևակերպում

Դտ 714	«Գործառնական այլ ծախսեր»	16000000 դրամ
Կտ 1112	«Արտադրական սարքավորում»	
		(1 միավոր)

3. Ինքնարժեքի վերահաշվարկի խնդիր չի առաջանում:
Տվյալ դեպքում ինքնարժեքը ` 3մլն, նվազագույն է իրացման զուտ արժեքից հանած վաճառքից կազմակերպման ծախսերը` $4 - 0.8 = 3.2$ մլն

(0,5 միավոր)

4. Չի բավարարում ոչ նյութական ակտիվի ճանաչմանը և պետք է ապաճանաչել:
Ճշգրտող ձևակերպում:

$$550\text{մլն} * 5\% = 27,5$$

Դտ 614	«Գործառնական այլ եկամուտ»	27500000 դրամ
Կտ 131	«Ոչ նյութական ակտիվ»	
		(1 միավոր)

5. Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքով վարվող հաշվապահական հաշվառումը ներկայացնում է գործարքների, իրադարձությունների և հանգամանքների ազդեցությունը տնտեսական ռեսուրսների և պահանջների վրա այն ժամանակաշրջանում, որում գործում է այդ ազդեցությունը, անկախ այն հանգամանքից, թե որ ժամանակաշրջանում են տեղի ունենում համապատասխան դրամական մուտքերն ու ելքերը:
Նշված ձևակերպում է պետք է խմբագրել որպես 2025թ ստացված ծառայություն և կատարված ծախս:

Դտ 712	«Իրացման / Գովազդի ծախսեր»	3000000 դրամ
Կտ 521	«Առևտրային կրեդիտորական պարտքեր»	

(0,5 միավոր)

6. Համաձայն ՀՀՄՍ 10-ի ` կազմակերպությունը պետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները` հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:
Տվյալ օրինակում
հաճախորդի սնանկացումը, որը տեղի է ունենում հաշվետու ժամանակաշրջանից հետո, սովորաբար հաստատում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորուստն առկա էր, և կազմակերպությունը կարիք ունի ճշգրտելու առևտրական դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը:
Նշված ձևակերպման ամսաթիվը ենթակա խմբագրման և 2025թ. հաշվետու տարվա արդյունքների մեջ արտացոլման:

Դտ 223	«Դեբիտորական պարտքերի գծով հնարավոր կորուստի պահուստաֆոնդ»	6000000 դրամ
Կտ 221	«Առևտրային դեբիտորական պարտքեր»	

(0,5 միավոր)

7. Հայտարարված շահաբաժնի ձևակերպում:

Դտ 342	«Նախորդ տարիների չբաշխված շահույթ»	5000000 դրամ
Կտ 529	«Պարտքեր շահաբաժինների գծով»	

(0,5 միավոր)

8. Տարեվերջին դեբիտորական պարտքի մնացորդը կլինի $36875000 - 4000000 - 6000000 = 26875000$,իսկ պահուստաֆոնը $*3\% = 806250$

Դտ 714	« Գործառնական այլ ծախսեր »	
		806250 դրամ
Կտ 223	«Դեբ պարտքերի գծ. հնարավոր կորուստի պահուստաֆոնը»	

(0.5 միավոր)

9. Նախորդ տարիների չբաշխված շահույթի ճշգրտումը

	Սկզբն մն.	74490000
	Դեբետային շրջ	Կրեդիտային շրջ
	450000	-27500000
	105000	
	640000	
	189547	
	16000000	
	3000000	
	6000000	
	5000000	
	806250	
	8000000	
Ընդամենը շրջ.	40190797	-27500000
	մնացորդ	6799203

(5 միավոր)

10. Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցում:

Դտ 521	«Առևտրային կրեդիտորական պարտքեր»
--------	----------------------------------

Կտ 221	«Առևտրային դեբիտորական պարտքեր»	4000000 դրամ
--------	---------------------------------	--------------

(0,5 միավոր)

11. Շահութահարկի պարտավորության հաշվեգրում:

Դտ 751	« Շահութահարկի գծով ծախս »	8000000 դրամ
Կտ 524	«Կրեդիտորական պարտք բյուջեի գծով »	

Դտ 343	«Հաշվետու տարվա շահույթ»	8000000 դրամ
Կտ 751	«Շահութահարկի գծով ծախս »	

(0,5 միավոր)

12. Ճշգրտող ձևակերպում:

Դտ 229	«Այլ դեբիտորական պարտքեր»	850000 դրամ
Կտ 531	«Այլ ընթացիկ պարտավորություններ»	

(0,5 միավոր)

Ձևակերպումների հիման վրա ճիշտ հաշվետվության կազմումը կգնահատվի 2 միավոր

(Ընդամենը 16 միավոր)

	Ծանոթա գրություն	2025 (ստորագրված)	2024 (ստորագրված)	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ		133492	117250	
Այդ թվում`				
Շենք, շինություն	1	94285	73200	3 միավ.
Արտադրական սարքավորումներ	2	39207	44050	1 միավ
Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	1			1 միավ
Ոչ նյութական ակտիվներ	4	4050	6650	1 միավ
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		137542	123900	
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	3	21430	13200	0,5 միավ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	6,8,10	26069	19500	1,5 միավ
Տրված կանխավճարներ		8188	26880	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		54525	14320	
Տրված կանխավճարներ	12	850		0,5 միավ
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		111062	73900	
ՀԱՇՎԵԿՇԻՌ		248604	197800	
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ				
Սեփական միջոցներ				
Բաժնետիրական կապիտալ		50	50	
Զբաղիված շահույթ	9	6799	85080	5 միավ
Ընդամենը սեփական միջոցներ		6849	85130	

Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ		155000	20000	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		155000	20000	
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ		6500	18500	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	5,10	17500	11500	1 միավ
Ստացված կանխավճարներ		24000	1225	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	11	22000	17320	0,5 միավ
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով		9985	7765	
Այլ ընթացիկ պարտավորություններ	12	1770	16360	0.5 միավ
Պարտքեր շահաբաժինների գծով	7	5000	20000	0,5 միավ
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		86755	92670	
Ընդամենը պարտավորություններ		241755	112670	
Հաշվեկշիռ		248604	197800	
Ընդամենը միավորներ				16

Ընդամենը (16 միավոր)

Խնդիր 1 , բաժին Բ)

Ցուցանիշներ	2024	2025	միավոր
Համախառն շահույթի տոկոս	$30545/189500=0,16$ կամ 16%	$28751/178650=0.16$ կամ 16%	1
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին տևողությունը	$11500/158955*365$ =26.41	$17500/149899*365$ =42.61	1
ընթացիկ իրացվելիության գործակիցները	$73900/92670=0,79$	$111062/86755=1,28$	1
արագ իրացվելիության գործակիցները	$(73900-13200)/92670=0,65$	$(111062-21430)/86755= 1,033$	1
դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից`	$189500/19500$ =9,7	$178650/26069$ =6,8	1

* կիրառել է հաշվետու տարվա ցուցանիշը՝ կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին տևողությունը և դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակիցը հաշվարկելիս:

:

(5 միավոր)

ԽՆԴԻՐ 2.		
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (անուղղակի մեթոդ)		
1. Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	հազ.դրամ	միավ.
Չուտ շահույթ մինչև հարկումը	3150	0.5
Ճշգրտումներ.		
Մաշվածություն 1800+1000 (5000/5)	2800	0.5
Ֆինանսական (տոկոսային) ծախսեր	700	0.5
Ոչ ընթացիկ ակտիվի վաճառքից օգուտ 400-(650-280)	-30	1
Գործառնական դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալում փոփոխությունները.	6620	
Պաշարների աճ 3950-5282	-1332	0.5
Դեբիտորական պարտքերի աճ 1650-3199	-1549	0.5
Կրեդիտորական պարտքերի նվազում 2830-3410	-580	0.5
Ստացված կանխավճարների նվազում 5100-2620	-2480	0.5
Գործառնական գործունեություններից ստացված դրամական միջոցներ	679	
Վճարված տոկոսավճարներ 3950-2510-700	740	0.5
Վճարված շահաբաժիններ 1800-1100-800	-100	0.5
Վճարված շահութահարկ 3125-3595-620	-1090	0.5
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ ներհոսք	229	
2. Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից մուտքեր	400	0.5
Ներդրումային գործուն. դրամական միջոցների զուտ ներհոսք	400	
3. Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր 15507-12667	2840	0.5
Երկարաժամկետ վարկերից մուտք 5580-2720	2860	0.5
Ֆինանսավորման գործուն. դրամական միջոցների զուտ ներհոսք	5700	
Դրամական միջոցների զուտ ներհոսք	6329	0.5
Դրամական միջոցներ առ 2024թ. դեկտեմբերի 31-ը	152	0.5
Դրամական միջոցներ առ 2025թ. դեկտեմբերի 31-ը	6481	0.5
Ընդամենը միավորներ		9

Հողվածների անվանումները դիտարկել բովանդակային իմաստով:

Խնդիր 3:

**Շահույթ կամ վնասի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար:**

Հոդվածներ	2024թ	Միավորներ
Հասույթ	185000	0.25
Ինքնարժեք	(104000)	0.25
Համախառն շահույթ	81000	
Աշխատավարձ	(25000)	0.25
Տոկոսային ծախսեր փոխառության գծով	(1250)	1-(Հաշվարկ 1)
Մասնակիցներից ներգրավված կապիտալի արժեք	(7260)	2-(Հաշվարկ 2)
Ընդամենը շահույթ	47490	0.25

(4 միավոր)

Հաշվարկ 1: $50000 * 6\% / 12 * 5 = 1250$

Հաշվարկ 2.

Մասնակիցներ	Հաշվարկ
Արամ	$85000 * 4\% / 12 * 6 = 1700$ $91000 * 4\% / 12 * 6 = 1820$
Անի	$42000 * 4\% / 12 * 6 = 840$ $44000 * 4\% / 12 * 6 = 880$
Աշոտ	$61000 * 4\% / 12 * 6 = 1220$ $40000 * 4\% / 12 * 6 = 800$
Ընդամենը	7260

**Սեփական կապիտալի և մասնակիցների մասին հաշվետվություն առ 2024թ
դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Կապիտալ	Շահույթ	Ընդամենը	
Մնացորդը առ 01.01.2024	188000		188000	
Արամ	85000		85000	0.25
Անի	42000		42000	0.25
Աշոտ	61000		61000	0.25

Կապիտալի շարժը				
Արամ	6000		6000	0.25
Անի	2000		2000	0.25
Աշոտ	(21000)		(21000)	0.25
Հաշվետու շահույթի տարվա կառուցվածքը		47490	47490	
Արամ		18996	18996	0.5-(Հաշվարկ 3)
Անի		18996	18996	0.5-(Հաշվարկ 3)
Աշոտ		9498	9498	0.5-(Հաշվարկ 3)
Մնացորդը առ 31.12.2024	175000	47490	222490	0.25
Արամ	91000	18996	109996	0.25
Անի	44000	18996	62996	0.25
Աշոտ	40000	9498	49498	0.25

(Սույն հաշվետվության բովանդակությունը ամբողջական ներկայացման համար 1 միավոր)

(Ընդամենը 5 միավոր)

Հաշվարկ 3:

Արամ ` $47490 * 2/5 = 18996$ (0.5)

Անի ` $47490 * 2/5 = 18996$ (0.5)

Աշոտ` $47490 * 1/5 = 9498$ (0.5)

Խնդիր 4:

1. Սույն ստանդարտը պետք է կիրառվի հաշվապահական հաշվառման քաղաքականությունն ընտրելիս ու կիրառելիս, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հաշվառելիս, ինչպես նաև հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն ու նախորդող ժամանակաշրջանների սխալների ուղղումը հաշվառելիս:
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն. որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք կիրառվում են կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով:
3. Կոնկրետ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության նկատմամբ կիրառվող ՖՀՄՍ-ի բացակայության դեպքում ղեկավարությունն իր դատողությունների հիման վրա ինքնուրույն պետք է մշակի հաշվապահական հաշվառման այնպիսի քաղաքականություն, որ տեղեկատվությունը լինի՝

ա) տեղին (ռելևանտ)՝ օգտագործողների կողմից տնտեսական որոշումներ ընդունելու համար, և

բ) արժանահավատ այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունները՝

- (i) ճշմարիտ ներկայացնեն կազմակերպության ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը,
- (ii) (արտացոլեն գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ոչ միայն իրավական ձևը, այլև դրանց տնտեսական բովանդակությունը,
- (iii) չեզոք են, այսինքն՝ կանխակալությունից զերծ,
- (iv) հաշվենկատ են, և
- (v) ամբողջական են բոլոր էական դրսևորումներում:

(Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը 2 միավոր, առավելագույնը 6 միավոր)

(6 միավոր)

Խնդիր 5

«Արմ» և «Վրաց» ընկերությունների համախմբված ֆինանսական վիճակի հաշվետվությունը առ 31.05.2025թ.

	Հազ.դր	միավոր
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Գուդվիլ (հաշվարկ 1)	682	1
Հիմնական միջոցներ (9650+1800)	11.450	0,25
Ներդրումներ ` բացառվում է դուստրի մասով	1.150	0,25
Ոչ կյուլթական ակտիվներ (800+120)	920	0,25
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	14.202	
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ (220-120+20)	120	0.25
Դրամական միջոցներ (350+50)	400	0,25
Դեբիտորական պարտքեր (1010+395-300)	1.105	0,25
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	1.625	
Ընդամենը ակտիվներ	15.827	
Կապիտալ	5.500	0,5
Չբաշխված շահույթ (հաշվարկ 2)	3.904	1
Չվերահսկվող բաժնեմաս (հաշվարկ 3)	851	0.5
Ընդամենը կապիտալ	10.255	
Ոչ ընթացիկ պարտավորություններ (1095+107)	1.202	0,25
Կրեդիտորական պարտքեր (4540+130-300)	4.370	0,25
Ընդամենը պարտավորություններ	5.572	
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	15.827	

Ընդամենը (5 միավոր)

Հաշվարկ 1 Գուղվիլ

	Հազ.դրամ	միավոր
Գուղվիլը ձեռք բերման ամսաթվին 2000- $((1040+400)*60\%)$	1.136	0.5
Գուղվիլի արժեզրկում $1136*40\%$	(454)	0.5
Գուղվիլը համախմբված Ֆին.վիճակի մասին հաշվ. 1136-454	682	

Հաշվարկ 2 Չբաշխված շահույթ

	Հազ.դրամ ծ	միավոր
ընկերության չբաշխված շահույթը 4065	4.065	0.25
Պաշարների ճշգրտում -120	(120)	
Հետձեռքբերումային շահույթի բաժնեմաս $(1088-400)*60\%$	413	0.25
Գուղվիլի արժեզրկում	(454)	0.25
Չբաշխված շահույթ	3.904	0.25

Հաշվարկ 3 Չհսկվող բաժնեմաս

	Հազ.դրամ	միավոր
Դուստրի սեփական կապիտալի $(1040+1088)*40\%$ համախմբման ամսաթվին կամ Չվերահսկվող բաժնեմաս ձեռք բերման պահին՝ 576, գումարած հետձեռքբերումային շահույթի ՉԲ՝ $688*0,4 = 275$ $ՉԲ = 576+275=851$	851	0.5